Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» ---------- 2010 թ. № ------ Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի № 37- Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70–րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ համայնքային կանոնները հաստատելու մասին» № 37- Ն որոշմամբ /այսուհետ՝ որոշում/ հաստատված Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ համայնքային կանոններում /այսուհետ՝ կանոններ/ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) կանոնների 4-րդ կետից հանել «տրանսպորտային միջոցների» բառակապակցությունը.

2) կանոնների 10-րդ կետից հանել «այդ թվում՝ տրանսպորտային միջոցների վրա» արտահայտությունը.

3) կանոնների 11-րդ կետից հանել առաջին նախադասության «, իսկ տրանսպորտային միջոցի վրա գովազդ տեղադրելու դեպքում՝ Երևան քաղաքի որևէ վարչական շրջանի ղեկավարին» արտահայտությունը.

4) կանոնների 12-րդ կետի ե) ենթակետում «պատշաճ» բառից հետո ավելացնել «կերպով ձևակերպված և հաստատված» արտահայտությունը.

5) 24-րդ կետում «սահմանված դրույքաչափի նոր վճարում» արտահայտությունը փոխարինել «վճարում նոր դրույքաչափով» բառակապակցությամբ.

6) կանոնների 25-րդ կետը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ՝
«25. Գովազդ տեղադրելու իրավունք ստացած անձը այդ իրավունքը կարող է փոխանցել մեկ այլ անձի, եթե այդ փոխանցումը համաձայնեցվել է վարչական շրջանի ղեկավարի և գովազդի վարչության հետ: Նման փոխանցում կարող է կատարվել գովազդի տեղադրման /տեղաբաշխման/ իրավունք ձեռք բերելուց հետո՝ 6 ամսից ոչ շուտ».

7) կանոններում ավելացնել 26.1-րդ կետ, այն շարադրելով հետևյալ բովանդակությամբ՝

«26.1 Գովազդատուն ունի իր գովազդային միջոցի տեղաբաշխման (տեղադրման) թույլտվության ժամկետի երկարաձգման իրավունք, եթե դրա երկարաձգումը հնարավոր է: Այդ նպատակով գովազդատուն, գովազդակիրը թույլտվության լրանալուց առնվազն մեկ ամիս առաջ դիմում է համապատասխան վարչական շրջանի ղեկավարին, որը այն քննարկում է գովազդի վարչության հետ և կայացնում համապատասխան որոշում».

8) կանոնների 29-րդ կետից հանել «տրանսպորտային» բառը.

9) կանոններում ավելացնել 46-րդ կետ՝ այն շարադրելով հետևյալ բովանդակությամբ.
«46. սույն կանոններին չհամապատասխանող գովազդային միջոցները ենթակա են դրանց համապատասխանեցման՝ մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը: Նշված ժամկետում գովազդային միջոցները սույն կանոններին չհամապատասխանեցնելու դեպքում դրանք ենթակա են ապամոնտաժման»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության հեղինակներ՝ Պ. Փլավչյան
Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ Գ. Գասպարյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1) Կանոնների 4-րդ, 10-րդ, 11-րդ և 29-րդ կետերից «տրանսպորտային միջոցներ» բառակապակցությունները հանելու առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության «Գովազդի մասին» օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է տրանսպորտային միջոցներում՝ այլ ոչ տրանսպորտային միջոցների վրա գովազդի տեղադրման հնարավորությունը: Քանի դեռ նշված օրենքում տեղ չեն գտել տրանսպորտային միջոցների վրա /արտաքին մակերեսին/ գովազդ տեղադրելու մասին դրույթներ, այդ պատճառով էլ նման դրույթներ չեն կարող սահմանվել Երևանի ավագանու որոշմամբ:

2) Կանոնների 12-րդ կետի ե) ենթակետում առաջարկվող «կերպով ձևակերպված և հաստատված» արտահայտության ավելացումը նպատակ է հետապնդում հստակեցնելու լիազորագրին առաջադրվող պահանջները:

3) Կանոնների 24- րդ կետում առաջարկվող «սահմանված դրույքաչափի նոր վճարում» արտահայտությունը «վճարում նոր դրույքաչափով» բառակապակցությամբ փոխարինելու նպատակն է շտկելու սույն կետում տեղ գտած սխալը, քանի որ, ըստ տեքստի, գովազդվող տեղեկատվությունը փոփոխվելու դեպքում՝ դրույքաչափը մնում էր նախկինը:

4) Ի տարբերություն կանոնների 25-րդ կետով սահմանվող դրույթի, որ գովազդի տեղադրման թույլտվությունը չի կարող փոխանցվել այլ անձի, առաջարկվող տարբերակը հնարավոր է համարում նման իրավունքի փոխանցումն այլ անձի՝ վարչական շրջանի ղեկավարի և գովազդի վարչության համաձայնությամբ:

5) Կանոններում 26*1 կետ ավելացնելու առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ պարտաճանաչ գովազդատուին հնարավորություն ընձեռնվի երկարաձգելու գովազդի տեղադրման ժամկետը:

6) Կանոններում 46-րդ կետով նախատեսվող դրույթի ավելացումը պայմանավորված է սույն կանոններին չհամապատասխանող գովազդային միջոցները այդ կանոններին համապատասխանեցնելու համար վերջնաժամկետ սահմանելուն:

Նախաձեռնության հեղինակ՝
Երևան քաղաքի ավագանու անդամներ՝

Գ. Գասպարյան

Պ. Փլավչյան

ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու № 37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին:

Երևան քաղաքի ավագանու նշված որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Նախաձեռնության հեղինակ՝
Երևան քաղաքի ավագանու անդամներ՝

Գ. Գասպարյան

Պ. Փլավչյան